# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 մարտի 2017 թվականի N39-Ա**

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N179-ԱԳ որոշմամբ հաստատված «Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում 2016 թվականի մարզումների անցկացման» պլան-ժամանակացույցի N1 հավելվածի 46-րդ կետի պահանջները՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում 2017 թվականի մարտի 17-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում կառավարման կետերի աշխատանքային խմբերի հետ իրականացնել շտաբային ուսումնական մարզումներ:

2. Առանձնացված շտաբային ուսումնական մարզումների պատշաճ անցկացումը կազմակերպելու նպատակով հաստատել՝

1) մարզպետարանի կառավարման կետերի և դրանց նախապատրաստման օպերատիվ խմբի կազմը, պարտականությունները և պատրաստականության բերման ժամկետները՝ համաձայն N1 հավելվածի,
2) պահեստային կառավարման կետում գտնվող ղեկավար կազմի, պահեստային կառավարման կետի նախապատրաստման և գործունեությունն ապահովող օպերատիվ խմբերի կազմն ու գործառույթները՝ համաձայն N2 հավելվածի,
3) պահեստային կառավարման կետի աշխատանքային խմբերի ուսումնավարժության ղեկավարման խմբի կազմը՝ համաձայն N3 հավելվածի,
4) մարզպետարանի օպերատիվ հաշվարկներում նշվող կետերի հերթապահության գրաֆիկը՝ համաձայն N4 հավելվածի,
5) մարզպետարանի օպերատիվ հերթապահության ցանկը՝ համաձայն N5 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ, առանձնացված շտաբային ուսումնական մարզումների ղեկավար Վ. Դավթյանին՝ ներկայացնել ամփոփ տեղեկատվություն մարզումների ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. մարտի 13
ք. Կապան

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2017 թվականի
մարտի 13-ի N39-Ա որոշման

# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## 1. Մարզպետարանի կառավարման կետերը, դրանց նախապատրաստման օպերատիվ խմբի կազմը, պարտականությունները և պատրաստականության բերման ժամկետները

**«Բարձր» կամ «Լրիվ» պատրաստականության աստիճանների բերման և մարտական գործողությունների վարման ժամանակ մարզպետարանի կառավարումն իրականացվում է հիմնական և պահեստային կառավարման կետերից, որոնց բացազատման վայրերն են.**

**Հիմնական կառավարման կետ-ք. Կապան Գ.Նժդեհի հրապարակ-1**
Պահեստային կառավարման կետ
Կառավարման կետի նախապատրաստման օպերատիվ խմբի կազմն է.

| | | |
|---|---|---|
| 1. | Գ.Թադևոսյան | Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, |
| 2. | Ա. Գրիգորյան | Մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ |
| 3. | Վ. Բալայան | ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ |
| 4. | Վ.Մխիթարյան | Մարզպետարանի աշխատակազմի վարչատնտեսական բաժնի պետ |
| 5. | Ա. Գրիգորյան | Մարզպետարանի աշխատակազմի վարչատնտեսական բաժնի առաջատար մասնագետ |

Կառավարման նախապատրաստման օպերատիվ խմբում անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են նաև տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետներ:

Պահեստային կառավարման կետի նախապատրաստման օպերատիվ խումբը պատրաստականության է բերում կառավարման կետը, կազմակերպում է աշխատասենյակների կահավորումը անհրաժեշտ գույքով, ստուգում կապի և ավտոմատացված միջոցների, դիզել-գեներատորի, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի աշխատունակությունը: Կառավարման կետի պատրաստականության ժամկետը «Ժ»+12 ժամ է: Մարզպետարանի օպերատիվ հաշվարկներում նշված կետերի ցանկը ներկայացվել է N4 հավելվածում:

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2017 թվականի
մարտի 13-ի N39-Ա որոշման

# ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ, ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

## I. ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ, ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԸ

1. Պահեստային կառավարման կետում (այսուհետ՝ պահեստային կառավարման կետ) տեղակայվում է ղեկավար կազմը, որոնք ընդգրկված չեն օպերատիվ խմբերում:

2. Պահեստային կառավարման կետի նախապատրաստման օպերատիվ խմբի կազմում ընդգրկվում են՝

1) ղեկավար՝

2) անդամներ՝

**3. Պահեստային կառավարման կետի գործունեությունը ապահովող օպերատիվ խմբերի կազմում ընդգրկվում են՝**

**1) տեղեկությունների հավաքման, վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ.**

ա. առաջին հերթափոխ՝

բ. երկրորդ հերթափոխ՝

**2) պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խմբի կազմում ընդգրկվում են հանրապետական գործադիր մարմինների և պետական մարմինների ներկայացուցիչները (բոլոր երկու հերթափոխերում յուրաքանչյուր մարմնից 2-3 անձ**

**3) կապի և ազդարարման ապահովման խումբ.**

ա. առաջին հերթափոխ՝

բ. երկրորդ հերթափոխ՝

**4) նյութատեխնիկական ապահովման խումբ.**

ա. առաջին հերթափոխ՝

բ. երկրորդ հերթափոխ՝

Անհրաժեշտության դեպքում օպերատիվ խմբերում կարող են ընդգրկվել լրացուցիչ ստորաբաժանումներ և աշխատակիցներ:

## II. ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎՈՂ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ, ՀԵՐԹԱՓՈԽՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

**Պահեստային կառավարման կետում տեղակայվող ղեկավար կազմի գործառույթներն են՝**

1) պահեստային կառավարման կետի աշխատանքների կազմակերպում.

2) Մարզպետի կողմից համապատասխան որոշում ընդունելու համար ղեկավար կազմի կողմից առաջարկությունների նախագծի մշակում և ներկայացում.

3) Մարզպետի կողմից համապատասխան որոշում ընդունելու համար առաջարկությունների ներկայացում.

4) ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և այլ գերատեսչությունների հետ փոխգործակցության կազմակերպում.

5) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների ճշգրտման (մշակման) կազմակերպում.

6) աղետների ռիսկերի նվազեցման, հնարավոր արտակարգ իրավիճակի կանխարգելման, հետևանքների նվազեցմանը և վերացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում.

7) արձագանքող ուժերի օպերատիվ կառավարման կազմակերպում.

8) պոտենցիալ վտանգավոր օբյեկտների հարակից տարածքներում մոնիթորինգի կազմակերպում:

**Պահեստային կառավարման կետի նախապատրաստման օպերատիվ խմբի գործառույթներն են՝**

1) պահեստային կառավարման կետի պատրաստականության բերում.

2) աշխատասենյակների անհրաժեշտ գույքով կահավորում.

3) կապի և ավտոմատացված միջոցների, դիզել-գեներատորի ու օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի աշխատունակության ստուգում.

4) պահեստային կառավարման կետի բժշկական ապահովման կետի ծավալում.

5) պահեստային կառավարման կետի անձնակազմին սննդով և ջրով ապահովման հարցերի կազմակերպում.

6) պահեստային կառավարման կետի պահպանության կազմակերպում.

7) ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի կետի ծավալում.

8) պահեստային կառավարման կետի անձնակազմի հանգստի, սննդի ընդունման համար նախատեսված տարածքների և սանհանգույցի նախապատրաստում:

**Պահեստային կառավարման կետում տեղակայվող կապի և ազդարարման հերթափոխների գործառույթներն են՝**

1) բնակչության ազդարարման կազմակերպում (համակարգի առկայության դեպքում).

2) քաղաքապետարանի ղեկավար կազմի, ենթակա հիմնարկների ղեկավար կազմի, համապատասխան կազմակերպությունների ղեկավարների ազդարարում.

3) իրավիճակի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունում, հաշվառում, նախնական վերլուծում, ամփոփում և սահմանված կարգով փոխանցում

տեղեկատվության վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խմբին.

4) Մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծում և սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում.

5) իր իրավասության սահմաններում պետական կառավարման մարմինների հետ փոխհամագործակցության կազմակերպում:

**Պահեստային կառավարման կետի գործունեությունն ապահովող օպերատիվ խմբերի գործառույթներն են՝**

**1) տեղեկությունների հավաքման, վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ.**

ա. իրավիճակի մասին տվյալների ընդհանրացում և վերլուծում.

բ. Մարզպետի կողմից համապատասխան որոշում ընդունելու համար առաջարկությունների և հրամանների նախագծերի նախապատրաստում.

գ. ընդունված որոշումների հիման վրա հրամանների և կարգադրությունների նախագծերի մշակում.

**2) պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խումբ.**

ա. ոլորտին վերաբերող իրավիճակի մասին տվյալների հավաքագրում, ընդհանրացում, վերլուծում և փոխանցում առաջարկությունների մշակման խմբին,

բ. պահեստային կառավարման և հիմնական (պահեստային) կետերի օպերատիվ խմբերի միջև փոխգործակցության կազմակերպում և աշխատանքների կոորդինացում.

գ. ոլորտին վերաբերող առաջարկությունների ներկայացում առաջարկությունների մշակման խմբին,

դ. ընդունված որոշումների ոլորտին վերաբերող կետերի մասին իրազեկում կատարողներին.

**3 կապի և ազդարարման ապահովման խումբ.**

ա. համապատասխան մարմինների հետ պահեստային կառավարման կետերի հետ կապի ապահովում.

բ. ենթակա հիմնարկների և կազմակերպությունների հետ կապի ապահովում.

գ. կապի սարքավորումների և համակարգչային տեխնիկայի աշխատունակության ապահովում.

դ. ընդունված որոշումների, հրամանների և կարգադրությունների մասին իրազեկում կատարողներին.

ե. պահեստային կառավարման կետում տեղակայվող ճգնաժամային կապի և ազդարարման անձնակազմի հերթափոխների գործառույթների իրականացում:

**4) նյութատեխնիկական ապահովման խումբ.**

ա. պահեստային կառավարման կետի աշխատանքի նյութատեխնիկական ապահովում.

բ. պահեստային կառավարման կետի անձնակազմին սննդով և ջրով ապահովում.

գ. պահեստային կառավարման կետի անձնակազմի բժշկական և հանգստի ապահովում.

դ. պահեստային կառավարման կետի պահպանում.

ե. ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի կետի աշխատանքների իրականացում:

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N3
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2017 թվականի
մարտի 13-ի N39-Ա որոշման

ԿԱԶՄ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Վարդան Դավթյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ

Սեյրան Ավետիսյան- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Արսեն Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

Վրույր Բալյան- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N4
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2017 թվականի
մարտի 13-ի N39-Ա որոշման

# ՑԱՆԿ
# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆՇՎՈՂ ԿԵՏԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ

Մարզպետարանի օպերատիվ հաշվարկներում նշվում են՝

**1. Տեղեկությունների հավաքման, վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ.**

Առաջին հերթափոխ՝ 17 մարտի

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Գայա Կարապետյան ժ. 9-12-ը,
2.Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Սեյրան Ավետիսյան ժ. 9-ից 12-ը,
3.Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Աիդա Համբարձումյան ժ. 9-ից 12-ը:

Երկրորդ հերթափոխ՝

| | |
|---|---|
| 1. Գրիշա Խաչատրյան | ժ.12-ից 15-ը, |
| 2. Մարգարիտա Զախարյան | ժ.12-ից 15-ը, |
| 3. Գայանե Դավթյան | ժ.12-ից 15-ը: |

Երրորդ հերթափոխ

| | |
|---|---|
| 1. Մուշեղ Կոստանդյան | ժ. 15-ից 18-ը, |
| 2. Սառա Գրիգորյան | ժ. 15-ից 18-ը, |
| 3. Աննա Ալեքսանյան | ժ. 15-ից 18-ը: |

**2.Պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խումբ.**

Առաջին հերթափոխ՝

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Մելանյա Հայրապետյան ժ. 9-12-ը,
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Սուսաննա Դավթյան ժ. 9-12-ը,
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Նարինե Գրիգորյան ժ. 9-12-ը:

Երկրորդ հերթափոխ՝

| | |
|---|---|
| 1. Աշոտ Ասրյան | ժ.12-ից 15-ը, |
| 2. Ռաֆիկ Ղազարյան | ժ.12-ից 15-ը, |
| 3. Վահրամ Արզումանյան | ժ.12-ից 15-: |

Երրորդ հերթափոխ

| | |
|---|---|
| 1. Վիլեն Սարգսյան | ժ. 15-ից 18-ը, |

2. Սուրիկ Վեզիրյան ժ. 15-ից 18-ը,
3. Արտյոմ Փիրյան ժ. 15-ից 18-ը:

**2. Կապի և ազդարարման ապահովման խումբ.**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Էդիկ Միրզոյան ժ. 9-12-ը,
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Ռազմիկ Ավետիսյան ժ. 9-12-ը,
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Իվետա Հայրապետյան ժ. 9-12-ը:

Երկրորդ հերթափոխ՝

1. Սարիկ Աղաբեկյան ժ.12-ից 15-ը,
2. Մարիաննա Աղախանյան ժ.12-ից 15-ը,
3. Նելլի Մովսիսյանն ժ.12-ից 15-ը:

Երրորդ հերթափոխ

1. Հայկ Հարությունյան ժ. 15-ից 18-ը,
2. Երջանիկ Սարգսյան ժ. 15-ից 18-ը,
3. Ժորա Բաբայան ժ. 15-ից 18-ը:

**4.Նյութատեխնիկական ապահովման խումբ.**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Արարատ Գրիգորյան ժ. 9-12-ը,
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Վարուժան Մխիթարյան ժ. 9-12-ը,
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Գայանե Սարգսյան ժ. 9-12-ը:

Երկրորդ հերթափոխ՝

1. Արմեն Թադևոսյան ժ.12-ից 15-ը,
2. Տյոմա Սարգսյան ժ.12-ից 15-ը,
3. Անուշ Աբրահամյան ժ.12-ից 15-ը:

Երրորդ հերթափոխ

1. Արփինե Քարամյան ժ. 15-ից 18-ը,
2. Նելլի Կարապետյան ժ. 15-ից 18-ը,
3. Համլետ Ավետիսյան ժ. 15-ից 18-ը:

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N5
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2017 թվականի
մարտի 13-ի N39-Ա որոշման

# ԳՐԱՖԻԿ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ

| | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ | 17 մարտի 2017թ. | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 09:00 - 10:00 | 10:00-11:00 | 11:00-12:00 | 12:00-13:00 | 13:00-14:00 | 14:00-15:00 | 15:00-16:00 | 17:00-18:00 |
| 1 | Սաքո Դավթյան | | | | | | | | |
| 2 | Վարդան Մարտիրոսյան | | | | | | | | |
| 3 | Մասիս Հովհաննիսյան | | | | | | | | |
| 4 | Արթուր Արզումանյան | | | | | | | | |
| 5 | Ռոմա Հարությունյան | | | | | | | | |
| 6 | Հրայր Հակոբյան | | | | | | | | |
| 7 | Ռոմա Չաքարյան | | | | | | | | |
| 8 | Վովա Այվազյան | | | | | | | | |

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ Մի ՂԵԿԱՎԱՐ

Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ